ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 82/3

10-ը հուլիսի 2025 թվականի

ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգը հաստատելու, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի սեպտեմբերի 30-ի նիստում 47/5 որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրությունը և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ.-ի դեկտեմբերի 26-ի թիվ 20 նիստում 20/5 որոշմամբ հաստատված ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչել մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի կանոնակարգը համաձայն հավելվածի,
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2020թ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 47 նիստում 47/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կանոնադրությունը,
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2016թ.-ի դեկտեմբերի 26-ի թիվ 20 նիստում 20/5 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնադրությունը,
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2025 թ. հուլիսի 10-ի նիստի թիվ **82/3** որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Մ. Մ. Օթարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին կամ ԿԲՈԱ բաժին) գործունեության իրավական հիմքերը:

1.2. Սույն կանոնակարգը մշակված է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ քաղաքականության, ԵՊՀ ԻՄ (2025-2030 թթ.) զարգացման ռազմավարական ծրագրի, ներքին կարգապահական կանոնների և որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) գործընթացները կանոնակարգող այլ փաստաթղթերի հիման վրա:

1.3. Բաժինը ԵՊՀ ԻՄ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության նպատակը, խնդիրներն ու գործառույթները սահմանվում են սույն կանոնակարգով:

1.4. Բաժինն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրություններով, գիտական խորհրդի որոշումներով, տնօրենի հրամաններով ու սույն կանոնակարգով:

1.5. Բաժինը սույն կանոնակարգով սահմանված խնդիրները լուծելու նպատակով իր իրավասությունների սահմաններում համագործակցում է ԵՊՀ ԻՄ կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ԵՊՀ որակի ապահովման, Շարունակական կրթության, Կարիերիայի և Ռազմավարական պլանավորման կենտրոնների, ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և այլ կազմակերպությունների հետ:

1.6. Բաժինն ունի ԵՊՀ ԻՄ խորհրդանիշով ձևաթուղթ:

2. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. **Բաժնի գործունեության նպատակն է՝ նպաստել** ուսուցման գործընթացների բարելավմանը՝ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին և տեղի ունեցող զարգացումներին համապատասխան, արդի կրթական ծրագրերի ստեղծմանը և գործող ծրագրերի կառուցվածքային ու բովանդակային բարեփոխումներին՝ աշխատաշուկայի և արտաքին ու ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության հիման վրա, կրթական ծրագրերի որակի ապահովմանը՝ պարբերական գնահատումների և վերապատրաստումների միջոցով դասախոսական կազմն անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսների համալրմամբ, երաշխավորել որակի բարձր չափանիշները՝ Մասնաճյուղի գործունեության հիմնական ոլորտներում, խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի ներդնումը:

2.2. Բաժնի խնդիրներն են.

2.2.1. Մշակել ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրով նախատեսված կրթական բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր՝ ուսման որակի հետ կապված խնդիրների վեր հանման և դրա շարունակական բարելավման համար, համակարգել դրանց կիրարկումը:

2.2.2. Աջակցել Մասնաճյուղում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի և այլ գործընթացների համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) քաղաքականության և ընթացակարգի իրականացմանը և լավ փորձի ներդրմանը՝ ապահովելով անհրաժեշտ փաստաթղթային հենքով:

2.2.3. Մշակել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման նոր քաղաքականություն և ընթացակարգեր, աջակցել դրանց կիրակմանը և նպաստել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին, ինչպես նաև դասավանդման և գնահատման կարողությունների զարգացմանը:

2.2.4. Մասնաճյուղի դասախոսական կազմին մասնակից դարձնել ԵՊՀ կողմից կազմակերպվող որակավորման բարձրացման ծրագրերին, մշակել և պարբերաբար իրականացնել որակավորման բարձրացման սեփական ծրագրեր՝ ապահովելով դասախոսական կազմի ներուժի զարգացումը:

2.2.5. Կազմակերպել դասախոսական կազմի վերապատրաստումներ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և կիրառման համար:

2.2.6. Կազմակերպել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ՝ վերհանված կարիքների հիման վրա:

2.2.7. Մշակել դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր, վերահսկել դրանց իրականացումը:

2.2.8. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:

2.2.9. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

2.2.10. Պարբերաբար վերանայել ԵՊՀ ԻՄ որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ռազմավարությունը, ապահովել խորհրդատվական աջակցություն դրանց իրականացման բոլոր մակարդակներում:

2.2.11. ԵՊՀ ԻՄ գործունեության հիմնական ոլորտներում պահպանել որակի արտաքին ապահովման պահանջներին համապատասխան միասնական չափանիշները և ապահովել որակի ներքին ապահովման գործընթացների համապատասխանությունը նշված չափանիշներին:

2.2.12. Բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը:

2.2.13. Կազմակերպել որակի ներքին ապահովման գործընթացների վերաբերյալ հաշվետվողականությունը՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների առջև ԵՊՀ ԻՄ հաշվետվողականությունը, նրանց տրվող տեղեկատվության թափանցիկությունը, մատչելիությունը և օբյեկտիվությունը:

2.2.14. Ապահովել Մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացներում գործընկերային և թիմային աշխատանքային միջավայր՝ նպաստելով որակի մշակույթի ներդրմանը:

2.2.15. Ստեղծել կանոնադրային և կազմակերպական հենք, ստորաբաժանումներին տրամադրել խորհրդատվություն Մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների և իրականացվող կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման գործընթացների վերաբերյալ:

2.2.16. Հաստատել և ամրապնդել կապեր Հանրապետությունում և տարածաշրջանում գործող բուհերի ՈՆԱ կենտրոնների հետ:

2.3. Բաժնի գործառույթներն են.

2.3.1. Մշակել և ներդնել Մասնաճյուղի կրթական գործընթացների բարեփոխումներին ուղղված փաստաթղթեր՝ կարգեր, ուղեցույցներ, տեղեկագրքեր և այլ անհրաժեշտ նյութեր:

2.3.2. Համակարգել Մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի ներդրման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացները:

2.3.3. Կրթական ծրագրերի ղեկավարների հետ համատեղ կազմակերպել և վերահսկել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի իրականացման և գնահատման գործընթացները:

2.3.4. Համակարգել կրթական ծրագրերի ղեկավարների և մենթորության ինստիտուտի աշխատանքները:

2.3.5. Համակարգել Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի աշխատանքները ՝ երիտասարդ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:

2.3.6. Վերհանել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական և մեթոդական կարիքները, կազմակերպել համապատասխան խորհրդատվություններ:

2.3.7. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան կազմել անհրաժեշտ վերապատրաստման թեմաներ և իրականացնել դասավանդողների մասնագիտական, մանկավարժական և հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

2.3.8. Մշակել ԵՊՀ ԻՄ որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, համապատասխան մեխանիզմներ և գործիքներ, համակարգել այդ գործընթացները Մասնաճյուղում:

2.3.9. Սույն կանոնակարգով սահմանված իրավասությունների շրջանակում իրականացնել որակի ներքին ապահովման գործընթացներ, ուսումնասիրել և մշակել դրանց բարելավման առաջարկներ, զեկուցել դրանց արդյունքների մասին:

2.3.10. Աջակցել ԵՊՀ ԻՄ բոլոր ստորաբաժանումներում որակի ներքին ապահովման գործընթացների մշակմանը, իրականացմանը և արդյունքների վերլուծությանը:

2.3.11. Ապահովել ՈՆԱ գործընթացների թափանցիկությունը՝ ներքին և արտաքին շահակիցների գործուն մասնակցությամբ:

2.3.12. Իրականացնել Մասնաճյուղի գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ/ վերաբերյալ ամենամյա տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն և ստացված արդյունքների հիման վրա մշակել մասնաճյուղի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկներ:

2.3.13. Կազմակերպել ԵՊՀ ԻՄ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, ինքնավելուծության զեկույցի պատրաստումը, նրա քննարկումը և հրապարակումը:

2.3.14. Համակարգել Մասնաճյուղի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ:

2.3.15. Ապահովել փորձագիտական խմբի եզրակացության քննարկումը և արդյունքներն օգտագործել որակի ներքին ապահովման գործընթացների բարելավման համար:

2.3.16. Համակարգել ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացները և օժանդակել դրանց արտաքին գնահատմանը և հավատարմագրմանը:

2.3.17. Համագործակցել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի և որակի ներքին ապահովման ֆակուլտետային հանձնախմբերի հետ և աջակցել նրանց աշխատանքներին:

3.ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Բաժինն անմիջապես ենթարկվում է ԵՊՀ ԻՄ տնօրենին:

3.2. Բաժնի աշխատանքները ղեկավարում է Բաժնի վարիչը, ում նշանակում և ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

3.3. Բաժնի հաստիքացուցակը և նրանում փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի առաջարկով:

3.4. Բաժնի վարիչը՝

3.4.1. պլանավորում, կազմակերպում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը,

3.4.2. ապահովում է Բաժնի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը, լուծում է դրանից բխող հիմնախնդիրները,

3.4.3. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի, տնօրենության և որակի կառավարման հանձնաժողովի նիստերին հանդես է գալիս հաշվետվություններով, զեկույցներով, տեղեկատվությամբ և համապատասխան առաջարկություններով,

3.4.4. Բաժնի աշխատակիցներին, իր լիազորության սահմաններում, տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, որոնք նրանց կողմից ենթակա են պարտադիր կատարման,

3.4.5. կատարում է աշխատանքի բաժանում Բաժնի աշխատակիցների միջև,

3.4.6. ստորագրում է Բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը, առանձին դեպքերում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր,

3.4.7. մասնակցում է տնօրենի կողմից հրավիրված նիստերին և խորհրդակցություններին,

3.4.8. ապահովում է Բաժնի համագործակցությունը ԵՊՀ համապատասխան բաժինների և այլ ստորաբաժանումների հետ,

3.4.9. առաջարկություններ է ներկայացնում ԵՊՀ ԻՄ տնօրենին Բաժնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ,

3.4.10. իրականացնում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով, տնօրենի հրամաններով, այլ իրավական ակտերով և պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ,

3.4.11. պատասխանատվություն է կրում Բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Բաժնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար։

3.4.12. առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է Բաժնի նիստեր, պարբերաբար կազմակերպում քննարկումներ, անհրաժեշտության դեպքում հրավիրում խորհրդակցություններ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ,

3.4.13. ստանում է բաժնի աշխատակիցների պարբերական հաշվետվությունները՝ Բաժնի աշխատանքային պլանով նախատեսված գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով և իրականացնում վերլուծություն,

3.4.14. իր լիազորությունների սահմաններում ներկայացնում է Բաժինը մասնաճյուղից դուրս, Բաժնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում է տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում է համագործակցության փաստաթղթեր՝ դրանք համաձայնեցնելով տնօրենի հետ,

3.4.15. կատարում է Բաժնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ:

3.5. Բաժնի կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ հաստիքացուցակով նախատեսված մասնագետները:

3.6.Բաժնի աշխատակիցների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով, պաշտոնի անձնագրերով՝ աշխատանքի նկարագրով, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրով, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

4.2. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: